

**ԹԱՔԷՄՊԱՍՈՒ**

**ՖԻՃԻ ԿՂԶԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ**

**ՈՎՈՐ մակարդակ աշխարհացոյց տալու  
տակի մը վրայ՝ աչքը գէպ 'ի Ասիոյ հա-**

**արչիպեղագոսներ կը ձևացընեն , ան-  
հուն միջոց մը բռնելով , որ հիւսիսային  
լայնութեան 34<sup>0</sup>ին կը սկսի , և մինչև հա-  
րաւային լայնութեան անժանօթ ծայ-  
րերը կը ձգի : Այս կղզեաց մէջէն կան**



**ԹԱՔԷՄՊԱՍՈՒ ՖԻՃԻ ԿՂԶԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ**

**րաւային արեւելեան և Ամերիկիոյ արե-  
մտեան դին տանի , անհամար կղզեաց  
բազմութիւն մը կը տեսնէ , որոնց ՈՎ-  
կիանիա անունը տրուեր է : Այս կղզի-  
ներս խումբ խումբ ցրուած բազմութիւ**

**որ շատ մեծ են . ասոնցմէ է Նոր Հոլան-  
տան , որ այնչափ մեծ է մինչև բուն ցա-  
մաքի նմանցուցած է , ու Հարաւային  
ցամաք կը կոչուի , և այն խումբ կղզեաց  
կը վերաբերի՝ որ Մելանէզիա կը մական-**

նուանին, և Ովկիանիայի հարաւային արեւմտեան կողմը կը ձեւացընեն: Կան դարձեալ անանկ բազմաթիւ ու մանր կղզիներ, որ վայրենի բնիկները հսկայէ մը ցրցընած աւազի նմանցուցած են:

Արդ բուն այս Մելանէզիան է՝ որ իր արեւելեան մասին մէջ, բաց ՚ի Նոր Բրիտանիոյ, Սողոմոնի և Լաբէրուզի արշիպելագոսներէն, Նոր Երրիտեան, ներէն և Նոր Քալետոնիայէն, նաև Ֆիժի բաւաւ կղզիներն ալ կը բովանդակէ:

Ասոնցմէ արշիպելագոս մը կը ձեւնայ, որ հարաւային լայնութեան 15° և 19° մէջ տեղուանք կ'իյնայ, և զլիսաւոր կղզիներն են, Լէվու, Վանուա-Լէվու, Քան Տոպու, Դապէ Ուին և Լանէմուա կղզիները, բաց ՚ի ուրիշ բազմաթիւ կղզիներէ՝ որ երեք հարիւր վաթսուոնէ պակաս չեն: Դազման Հոլանտացի հռչակաւոր նաւորդն եղաւ՝ որ 1643<sup>ն</sup> գտաւ այս կղզիները և Գուշիէլմուս Իշխանիկղզիք անուանեց: Քուք ալ 1773<sup>ն</sup> և 1777<sup>ն</sup> այցելութիւն մ'ըրաւ նոյն կղզիներուն:

Ուստի այս կղզիները հասարակածէն անդին կ'իյնան, որոնցմէ ամենէն հիւսիսայինը հասարակածի գծէն զրեթէ հարիւր երեսուն փարսախ հեռու կ'իյնայ: 1861<sup>ն</sup> Անգղիացւոց ձեռքը անցան: Սակայն կան կողմեր որ դեռ ևս սեւամորթ վայրենեաց ձեռքն են, ուրոնք իրենց յատուկ ցեղապետներն ալ ունին: Այն բնկաց ցեղապետներուն զլիսաւորներէն մէկն է Թաքէմպու, զոր սպիտակամորթք թագաւոր կը կոչեն, սակայն իր ժողովրդեան վայրենի բարբարոսութեանը պատճառաւ որ 100,000<sup>ն</sup> չափ կան, իր իշխանութիւնն ալ շատ չափաւոր է:

Այն կղզիներուն մէջ բնութեան բուսական գեղեցկութիւնը կարելի չէ ստորագրել. հացի ծառը, քաքաոն, Դաիդիի շաղանակենին, և արմաւենիի շատ տեսակներ ինքնիրեննուն կ'աճին, ուսանց մասնաւոր մարդկային խնամքի: Բամբակենիի առատ մշակութիւն կ'ըլլուի: Ծովը տեսակ տեսակ ձկներով լի

է, և զլիսաւորապէս, ծովեղերաց մօտ ոտորէի առատ ձկնորսութիւն կ'ըլլուի, որ Չինաստանի վաճառականութեանը մէջ մէկ հատիկ բնութեամբ առարկայն է: Այս ձկնորսութեանս պատճառաւ էր որ երկայն ատեն Անգղիացիք և Հիւսիսային Ամերիկացիք մէկմէկու հետ լծնամանալով, զբնիկները փոխադարձ մէկմէկու դէմ կը դրդուէին, և անով կը վարժեցընէին զանոնք ամենայն բռնութեան միջոցներով սպիտակամորթից վրայ յարձըկելու: Անանկ որ այսօրուան օրս շատ անգամ Եւրոպացիք բնիկ ժողովուրդներէն մեծամեծ քնատներ կը կրեն, և զուր տեղ Թաքէմպու թագաւորին կը բողոքեն՝ որ զանոնք պատժէ. ան չսեւու կը զարնէ: Նաև անանկ կ'երևայ որ բնիկ կղզեցիները մէջերնին դաշինք դրած են սպիտակամորթները երկրէն դուրս մերժելու: Սակայն բամբակենի մշակողաց երկիրներ կը յարձըկին, ու մշակները սպաննելով, երկիրները աւերելով և ամեն բան կողոպտելով կ'առնեն կը փախչին: Այս վայրենեաց մէջ մարդակերութիւնն ալ սովորական է:

#### ՊՐԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

(Տես Հատ. ԻԸ. երես 342)

Պրահմանը շարունակուելով վրայ հեծած, այն ազնիւ կենդանւոյն վրայ՝ զոր բնութիւնը կարծես թէ իրեն հայրենեաց ամայի գաւառներուն համար ըստեղծած էր, և զոր Արաբացիք անպատի նաւ կը կոչեն, շուտ մը Եգիպտոս հասաւ. հոնկէ ուղեց Տաճկաստան անցնիլ, այն յիշատակաց երկիրը, ուր մարդը անցեալ քաղաքականութեան աւերմունքները կը տեսնէ և նորածնին վրայ ալ կը զարմանայ: Իր երկրին և Եգիպտոսի մեծակառոյց շէնքերուն մէջ զարմանալի նմանողութիւն մը գտաւ, և անով հաստատեց որ այս երկու անյիշատակ կապանքներով միացած աշխարհներն՝ կրնան իբր մարդկութեան բեղնաւոր մարք համարուիլ: